ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 16-ից 20-ը ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից կազմակերպված «Միջազգային հարկային վարչարարության կառավարում» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով քաղաք Ալմաթի գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Աշոտ Միրումյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 1 բաժնի ավագ հարկային տեսուչ,

2) Էմմա Խանգելդյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն, ք.Ալմաթի 2024թ. դեկտեմբերի 16-ից 20-ը:

3. Հրավիրող կողմը՝

ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (CCAMTAC):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Միջազգային հարկային վարչարարության կառավարում» թեմայով աշխատաժողովին: Աշխատաժողովը միտված էր միջազգային հարկային քաղաքականության և վարչարարության մասով հաճախակի հանդիպող և նոր ձևավորվող խնդիրների լուծման տարբերակներին, միջազգային հարկային քաղաքականության և վարչարարության ռազմավարության ձևավորմանը, համապատասխանության ռիսկերի կիրառ-

մանը, ստուգումների և տեղեկությունների փոխանակման բարելավման ուղղություններին, ինչպես նաև հարկային օրենսդրության և ընթացակարգերի կիրառման ընթացքում ծագող հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց վերացմանն ուղղված արդյունավետ աշխատանքների կատարմանը:

Աշխատաժողովին մասնակցող տարածաշրջանային 8 երկրների հետ իրականացվել են փոխադարձ քննարկումներ: Ուստի հանդիպումն աչքի էր ընկնում բովանդակալից ակտիվ քննարկումներով, երկրների հարկային փորձի փոխանակմամբ, խնդիրների առաջադրումներով և փոխադարձ շփումներով: Տարածաշրջանային երկրների ներկայացուցիչների, ինչպես նաև ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) ներկայացուցիչների հետ քննարկվել են երկրների ներքին և արտաքին հարկման կարգավորումներին և առանձնահատկություններին ուղղված հարցեր:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) Միջազգային հարկային վարչարարության կարևորությունը, դրա բաղադրիչները, զարգացող երկրներում առաջացող մարտահրավերները և ներկայիս միջազգային հարկման միտումները,

2) Միջազգային հարկային պլանավորման և համապատասխանության ռիսկերի հիմնական ոլորտները,

3) Միջազգային հարկային վարչարարության ռազմավարական և գործառնական ճանապարհային քարտեզի կազմումը,

4) Ժամանակակից համապատասխանության ռիսկի կառավարումը, դրանց շրջանակները և գործընթացները, ինչպես նաև համապատասխանության ռիսկի կիրառումը զարգացող և զարգացած երկրներում,

5) Անդրսահմանային (cross-border) գործառնությունների մասով ստուգումների և ուսումնասիրությունների արդյունավետ իրականացմանն ուղղված ծրագրի մշակումը, ստուգման գործընթացները,

6) Տրանսֆերային գնագոյացման և միջազգային հարկային ստուգումների հիմնական հաջողության գործոնները,

7) Գործողություն երկուսի (Pillar Two) լուծումների ներկայացումը և համաշխարհային նվազագույն հարկի կիրառման շրջանակները,

8) Գործողություն երկուսի (Pillar Two) կիրառումը միջազգային առևտրի ոլորտում, ինչպես նաև Գործողություն երկուս (Pillar Two) կիրառող երկրների փորձը և վերջինիս զարգացման ընթացքում առաջացող խնդիրներն ու դրանց լուծումները:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ ունեցան Միացյալ Թագավորության, Հարավային Աֆրիկայի, Բելգիայի, ինչպես նաև ԱՄՀ-ի կողմից որպես փորձագետներ ներգրավված ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Դանիայի ներկայացուցիչները:

Աշխատաժողովը վարող մասնագետների ելույթները բազմաբնույթ էին և արտացոլում էին այդ երկրներում միջազգային հարկման և դրանց համապատասխանության ռիսկերի կառավարմանը հարող խնդիրներն ու դրանց լուծումների փորձը: Աշխատաժողովի թեմաները ներկայացվեցին 5 օրերի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա ավարտին հարց և պատասխանների միջոցով ամփոփելով տվյալ նյութերի բովանդակությունը:

Մասնակցություն ենք ունեցել բոլոր պանելային քննարկումներին, որոնցից գրեթե բոլորում ներկայացրել ենք Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկային կարգավորումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրենսդրության մշակման և իրավական ակտերի ընդունման գործընթացը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումը կրում էր խորհրդատվական և ուսուցողական նպատակ, ուստի որևէ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

Դասընթացի ավարտին ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից մասնակիցները արժանացել են հավաստագրերի՝ «Միջազգային հարկային վարչարարության կառավարում» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատաժողովին մասնակցելը հնարավորություն տվեց հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ, ծանոթանալ վերջիններիս միջազգային հարկային հարաբերությունների լավագույն փորձին, ինչը կարող է նպաստել ՀՀ ՊԵԿ գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Միրումյան՝

Էմմա Խանգելդյան՝

24.12.2024թ.